ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26-ը փետրվարի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակցի՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հավելված 6.1-ից, որտեղ մասնակիցը չի նշել տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը, ինչպես նաև հավելված 6.2 ներկայացված մեքենայի տեխնիկական անձնագրի պատճեն թերի է ներկայացված՝ բացակայում է մեքենայի տվյալների կողմը: Ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 26.02.2018թ. ծանուցել մասնակցին անհամապատասխանության շտկման վերաբերյալ: «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է նաև բանկային երաշխիքի բնօրինակը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, որը ներկայացվել է 17.02.2018թ. մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 28.02.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան

28.02.2018թ